

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
			

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարման ուղղված քայլերը	Կարծիք
1	2	3	4	5
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	09.06.01.	«1192. Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում»	<p>Կրթության ոլորտում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման և դրա շարունակականության ապահովման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝</p> <p>Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) կառավարում</p> <ul style="list-style-type: none"> • իրականացվել է 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող ցանցի աշխատանքի ամենօրյա հսկողությունը. ✓ վերահսկվել է ՀԿՑ-ի տեխնիկական սպասարկման աշխատանքը, ✓ կատարվել է դպրոցների էլեկտրոնային հասցեների օգտագործման ստուգումը, ✓ հաշվառվել է դպրոցների օգտագործած ինտերնետի ծավալը, ✓ կատարվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկման աշխատանքները, <ul style="list-style-type: none"> • իրականացվել է ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող սերվերների տեխնիկական սպասարկումը. ապահովվել կայքերի անխափան աշխատանքը, <p>ՀԿՑ-ում ապահովվել են.</p> <ul style="list-style-type: none"> • արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանությունը, գործել են ինտերնետային պարունակությունը հնարավորինս սահմանափակող ֆիլտրային ծրագիրը, տվյալների փաթեթների դինամիկ ուղղորդումը, ցանցում եղած բոլոր համակարգիչների ավտոմատ թարմացումով հակավիրուսային կենտրոնացված համակարգը, • կապուլու ծանրաբեռնվածությունը ցուցադրող, գրանցող և վիճակագրական տվյալներ հավաքող առցանց համակարգի, ՀԿՑ ընթացիկ վիճակը 	

			<p>բնութագրող դինամիկ շտեմարանի, ուսումնական հաստատությունների օգտագործած ինտերնետային կայքերի և տվյալների ծավալների մասին գրանցումների համակարգի գործունեությունը,</p> <ul style="list-style-type: none"> • ցանցում ընդգրկված ուսումնական հաստատությունների համար իրականացվել է վիճակագրական տվյալների հավաքման և SQL համատեղելի բազայի ու WEB սերվերի վրա տեղադրված ուսումնական հաստատությունների էջերի տեխնիկական սպասարկման, էլեկտրոնային փոստի վարման աշխատանքների իրականացումը, • կազմվել են համապատասխան ամսական հաշվետվությունները: <p>Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործում</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի, Ակունքի, Վերին Գետաշենի N2 միջնակարգ դպրոցներում կայանի դասընթացներին մասնակցել են 105 աշակերտներ, վերապատրաստվել՝ 58 ուսուցիչներ, • Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Հաթերք և Վաղուհաս գյուղերի միջնակարգ դպրոցներում կայանի դասընթացներին մասնակցել են 37 աշակերտներ, վերապատրաստվել՝ 52 ուսուցիչներ, • իրականացվել է ՇԻՀԿ-ի շահագործման ընթացիկ վերահսկումը: <p>«Հայկական կրթական միջավայր» պորտալի և ենթակայքերի աշխատանքի կազմակերպում, ԿՏԱԿ-ի կայքի վարում</p> <ul style="list-style-type: none"> • իրականացվել է «Հայկական կրթական միջավայրի» (www.armedu.am) տեխնիկական սպասարկման աշխատանքը, հարստացվել է բովանդակային պարունակությունը, • գործարկվել են պորտալի ենթակայքերը. <ul style="list-style-type: none"> ✓ «Հայկական կրթական միջավայր» ֆորումը (http://forum.armedu.am, ավելի քան 2060 թեմա, 76445 գրառում, շուրջ 5409 գրանցված օգտվող), ստեղծվել են 179 նոր ուսումնամեթոդական թեմաներ, կատարվել է 8885 գրառում, գրանցվել է 205 նոր մասնակից, տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն, ✓ «Պաշարների շտեմարան» կայքը (http://lib.armedu.am, ավելի քան 8880 պաշար, 	
--	--	--	---	--

			<p>շուրջ 6657 գրանցված օգտվող), ըստ դասակարգված բաժինների տեղադրվել են 324 նոր էլեկտրոնային պաշարներ (այդ թվում՝ ուսումնական և մեթոդական նյութեր, կրթական փաստաթղթեր, ստեղծվել են Դպրոցականների առարկայական օլիմպիադա 2018-2019 ուստարի ենթաբաժինը, տեղադրվել են ապահով համացանցին և կիբեռանվտանգությանը վերաբերվող ուղեցույցներ և ձեռնարկներ, «Կրթություն 2019» շաբաթաթերթի համարները և այլն),</p> <ul style="list-style-type: none"> ✓ «Հեռավար ուսուցում» համակարգը (http://learning.armedu.am/), կազմակերպվել են հեռավար դասընթացներ. <ul style="list-style-type: none"> - 122 ուսուցիչների համար կազմակերպվել է «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով հերթական դասընթացը. ակտիվ ու արդյունավետ մասնակցություն ցուցաբերած 53 ուսուցիչներ ստացել են ԿՏԱԿ-ի հավաստագրեր, - տարբեր առարկաների 9 մասնագետներ անցկացրել են հեռավար դասընթացներ 240 գործընկեր-ուսուցիչների համար, ✓ Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի http://etwinningplus.armedu.am/ տեղեկատվական և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (http://esource.armedu.am/) կայքերը, ✓ «Դպրոցական կայքեր» http://schoolsite.am/ տիրույթում գործող դպրոցների կայքերի շահագործմանն աջակցելու նպատակով կազմակերպվել է խորհրդատվություն, <ul style="list-style-type: none"> • գործարկվել է ԿՏԱԿ-ի (www.ktak.am) կայքը: <p>Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում</p> <ul style="list-style-type: none"> • իրականացվել է Արցախի Հանրապետության դպրոցների հաշվետվությունների հավաքագրում, ստուգում, լրամշակում, • պատրաստվել են բազմաթիվ վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ 	
--	--	--	---	--

			<p>անհրաժեշտ չափանիշների և տրամադրվել ՀՀ ԿԳՆ, Ազգային վիճակագրական ծառայություն, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), ՋԼՄ-ների, տեղական և միջազգային ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների:</p> <p>Կրթության ոլորտում SCS բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում</p> <ul style="list-style-type: none"> • տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, • ապահովվել է մասնակցություն <ul style="list-style-type: none"> ✓ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի գործընկերության (UNPRPD) առաքելության ներկայացուցիչների հետ «Ինչպես ստեղծել ազգային վիճակագրական համակարգ, որը կարող է նպաստել ներառման» թեմայով կազմակերպված հանդիպմանը, ✓ մասնակցություն MEASURE Evaluation ծրագրի կողմից կազմակերպված է աշխատաժողովին՝ երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի ընթացիկ մշտադիտարկման համար մշակված 21 ցուցանիշների քննարկման և դրանց տվյալների հավաքագրման պատասխանատուների սահմանման օրակարգով, • տնօրենի տեղակալը 2019թ. մարտ ամսին International Visitor Leadership Program /Միջազգային այցելու-Առաջնորդների ծրագիր/ ծրագրի շրջանակներում Հայաստանից կրթության ոլորտի մասնագետների խմբի կազմում մեկնել է ԱՄՆ՝ Միացյալ Նահանգների վեց քաղաքներում ուսումնասիրելու կրթական քաղաքականության մեջ և պրակտիկայում ուսումնական հաստատությունների թվային կրթության ռազմավարության միտումները, կրթական գործընթացում տեխնոլոգիաների ներառման արդյունքում գրանցած հաջողություններն ու մարտահրավերները, ինչպես նաև կրթության կազմակերպման մեթոդաբանությունն ու լավագույն փորձը, այցելել են կրթական տեխնոլոգիաների ներդրմամբ և կառավարմամբ զբաղվող բազմաթիվ դպրոցներ, բուհեր, պետական ու մասնավոր կրթական կառույցներ՝ 	
--	--	--	---	--

			<p>իրականացնելով աշխատանքային քննարկումներ և փորձի փոխանակում շահագրգիռ պետական ու հասարակական գործիչների, կառավարող մարմինների և հետազոտողների հետ,</p> <ul style="list-style-type: none"> • ցուցաբերվել է տեղեկատվական աջակցություն «Ապահով համացանց 2019» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումների և «Ոգնի-2019» ամենամյա համակարգչային մրցույթների կազմակերպման նպատակով, • ըստ անհրաժեշտության, կազմվել և տարբեր շահագրգիռ կազմակերպությունների են ներկայացվել հանրակրթության ոլորտը բնութագրող ամփոփ վիճակագրական տեղեկանքներ ու աղյուսակներ: <p>Ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ հետազոտությունների իրականացում և արդյունքների վերլուծություն</p> <ul style="list-style-type: none"> • իրականացվել է ՀՀ դպրոցներում SCS կարիքի գնահատման ուսումնասիրությունը, կատարվել են հավաքագրված տեղեկատվության բազաների մաքրման, տեղեկատվության լրամշակման և վերլուծության պատրաստման աշխատանքները: <p>Եվրամիության Իթվինինգ Պլյուս և Դպրոցների վիրտուալ համայնք ծրագրերի իրականացում</p> <ul style="list-style-type: none"> • համակարգվել է ծրագրի մասնակից ավելի քան 250 դպրոցների շուրջ 1200 ուսուցիչների աշխատանքը, • ապահովվել է մասնակցություն Աջակցող գործընկեր ծառայությունների աշխատանքային հանդիպմանը (Բրյուսել), • ապահովվել է մասնակցություն Իթվինինգի ապագայի վերաբերյալ քննարկումների աշխատանքային խմբում (Բրյուսել), • ներկայացվել են 2017-18թթ դրամաշնորհային ծրագրի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները, • սկսվել են 2019թ. Աղվերանում կայանալիք միջազգային սեմինարի կազմակերպչական աշխատանքները, • իրականացվել են նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ Իթվինինգ ծրագրում ներգրգրավելու աշխատանքները, անցկացվել են նախնական հանդիպում սեմինարներ, • անցկացվել են հանդիպում սեմինարներ Արարտի 	
--	--	--	--	--

			<p>մարզի դպրոցների ուսուցիչների համար:</p> <p>Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի՝ ԿԿՏՀ-ի շահագործում</p> <ul style="list-style-type: none">• իրականացվել են ԴԿՏ համակարգի տեղեկատվության ստուգման, բազաների մաքրման, դպրոցների կողմից սխալ կամ թերի լրացված դաշտերի սրբագրման, մաքրման և մուտքագրման, ՀՀ ԱՎԿ հանձնվող տարեկան ամփոփ վիճակագրական աղյուսակների մշակման աշխատանքները,• իրականացվել է ԴԿՏՀ-ի բովանդակային և տեխնիկական անընդհատ սպասարկումը, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն,• նախակրթարաններում տեղադրվել է և շահագործել «Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը»:	
--	--	--	---	--